1673·

Օրհնեալ ես հարս Աստուածորդւոյ, Բարուն զօրայ զքեզ փոխադրեալ,
Նըմին վիմի Հոգոյ Սրբոյ· Ի պըսակել այսմ աշխարհէ։
Ուրախութեամբ մեզ հիմն արկեալ· Որք ցնծութեամբ ապաւինին՝
Փառք տաճարիս Լեվա եղեալ· Սուրբ Կոյս, օգնեա նոցին։

Նկց (նկարեցաւ) ի թվ· ՌՃԻԲ, օգոստոս ամս· ԺԷ։ (ի Լեմպերկ, ի վերայ բիբեղնեայ պատկերի Ցիրամօր· տողագլուխք գրուածին կապեն Օնոփրիոս)։

1673·

Գրեցաւ և կատարեցաւ ժամագիրքս թվ· ՌՃԻԱՆ, ձեռամբ յոգնամեղ փցուն գրչի·· Գրիգորի· որ միայն անուամբս եմ և հեռի ի ճշմարտութենէն... Սկիզբն կալայ գրել Դաւթեան երգն և զԺամագիրքն և զՏօնացոյցն և զՇարականքն՝ մինչև ի Աղուհացոն վեցերորդ կիրակին, «Որ զերկրորդ քո գալստեանդ» և այլն· ի տղայքն աշակերտքն գրեալ են· և խընդրեմք անմեղադիր լերուք· ոչ թէ ծախսի էր գրեալ, այլ յիշատակ որդւոյս Միքայէլին՝ դեռաբոյս մանուկին, որ եօթն տարւոյ և երկու ամսոց էր, Մինաս արքեպիսկոպոս ձեռնադրեց դպիր· Ով որ չունի իշխանութիւն ուրիշ որդիքոցմուս, որ դորա ձեռանէ առնուն, այլ դորա լինի յիշատակ և վայելէ անսասան կենաց· ամէն։ Որպէս զսկիզբն սկսայ գրել, նոյնպէս և վերջն կատարեցի։·· Կատարեցաւ թվ· ՌՃԻԱՆ, ապրիլ ամսոյ երեքին, օրն մեծ չորեքշաբաթի մատնութեանն Քրիստոսի Աստուծոյ մերոյ, որ է օրհնեալ յաւիտեանս· ամէն։

Թվին ՌՃԻԹ (1631) յունվար ամսոյ ԻԸ, կազմեցաւ ձեռամբ անարժան Առստագէս երիցու, ի նորաշէն քաղաքն Սդանիսլաւ, ի վայելումն սիրելի եղբօրն իմ և իւր զաւակացն, որ են՝ Տէր Գրիգոր ընտիր և պատուելի քահանայն· Տէր Աստուած բարով վայելել տացէ իւրն և իւր զաւակացն ընդ երկայն աւուրս։ Աղաչեմ զձեզ մի՛ մոռանայք մէկ Հայրմերիս·· ամէն։ [Մըխիթար· վիճնայ]։

1676·

Սրբազան դասք երջանիկ վարդապետաց, արհի և պանծալի եպիսկոպոսաց, մեղսաքաւիչ և իմաստուն երիցանց, յիշեցէք ի մաքրափայլ աղօթս ձեր զպանդըխտացեալ և տառապեալ մեղսամածեալ՝ անուամբ և եթ Մինաս բանի սպասաւոր, երկրին Պուղտանա առաջնորդ· որ զգիրքս գտի Եաշ քաղաքն, կտրատեալ ի յայլազգեաց, և առի յիս, և զպակասն գրեցի ձեռաք իմովք, առ ի յիշատակ անձին իմոյ և ծնողաց իմոց, Թոխաթցի Տէր Ալեքսիանոսին, և մօրն իմոյ իրիցկին Խասխաթունին· միով ողորմի ասէք և յիշեցէք· զի